

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԳԱՅԱՆԵ ԲԱԲԼՈՅԱՆ ԱՐՇԱԿԻՐԻ Ա/Ձ»-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/154 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	<p>«Երևան» ձուլվածքով նստարան: Նստարանի ոտքերը թուջե ձուլվածքից (C4-10 մակնիշի), կողքերին 3մմ բարձրություն ունեցող տառերով գրված www.yerevan.am կայքի անվանումը միաձույլ: Ոտքերի ներքնամասում ունենա գետնին ամրացնելու հնարավորություն (անցք Փ7մմ): Նստարանի ոտքերը հղկված, նախաներկով պատված, ներկված յուղաներկով (գույնը սև) իսկ www.yerevan.am-ը՝ ոսկեգույն: Նստարանի մեջքի մասը թուջե ձուլվածքից (C4-10 մակնիշի), հաստությունը 9 մմ: Պատկերը հայկական զարդանախշ: Պատկերը ներկայացված պատվիրատուի կողմից կամ համաձայնեցված պատվիրատուի հետ: Պատկերի վերևի մասում ձուլված «Երևան» տառերի բարձրությունը 5սմ: Մեջտեղի մասում կլոր շրջանակի մեջ (շրջանակի տրամագիծը 190մմ) ձուլվածքով պատկերված է Երևան քաղաքի դրոշը և զինանշանը: Ձուլվածքը հղկված, նախաներկով պատված, ներկված յուղաներկով սև գույն: Երևանի զինանշանը ներկված յուղաներկով ոսկեգույն: Փայտ հաճարե խոնավությունը (մինչև 7): Բաղկացած է մեջքի հենարանից և նստելատեղից: Մեջքի հենարան՝ երկարությունը 1800 մմ, հաստությունը 40 մմ: Մեջքի հենարանի փայտյա վերևի կիսակլոր և ներքևի ուղիղ մասերը ամբողջ երկայնքով համապատասխանաբար մեկ կտորից պատրաստված, մեջքը թուջե ձուլվածքի հենարանը տեղադրելու բացվածքով: Բացվածքի երկարությունը 1110 մմ: Վերևի մասը կիսակլոր 52 սմ երկարությամբ: Նստելամասը բաղկացած է հինգ փայտյա ձողերից՝ չափերը 1800x60x40մմ: Նստարանի ամբողջ փայտյա մասերը երանգավորված դեղին-ծիրանագույն և/կամ շագանակագույն /համաձայնեցնել պատվիրատուի հետ/, լաքապատված տախտակամածային լաքով: Նստարանը հավաքված վիճակում պետք է ունենա ամրացման գոտի,</p>

որը ձգվում է ոտքերից դեպի նստելատեղի տակ: Աջ և ձախ կողմում 0.5 “ խողովակից 50 սմ երկարությամբ ամրաններ, որոնք ապահովում են ոտքերի գուգահեռակցությունը: Մեջքից դեպի նստելատեղի տակի մասն միացված են 2 հատ հարթ մետաղյա ամրաններ (25x3մմ), որը ամրացված է նստելատեղի բոլոր 5 փայտյա ձողերին, որոնք ապահովում են դիմացկունակությունը: Նստարանները մատակարարվում են հավաքված վիճակում, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով: Արտադրողը պարտավոր է կատարել սպասարկում 1 տարի ժամանակով (գարնանը, ամռանը, աշնանը` 3 անգամ): Թարմացնել գույները, անհրաժեշտության դեպքում ամբողջությամբ ներկել: Փայտյա մասերը բնակլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած թերությունների դեպքում վերականգնել լաքապատված մակերեսը: Տեղափոխումն և տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Ըստ պատվիրատուի ներկայացրած հասցեների (Երևան քաղաքի տարածքում): Պատվիրատուի պահանջով (քաղաքային միջոցառումների, համերգների ժամանակ) կատարողը պարտավոր է իր միջոցների հաշվին ժամանակավորապես ապամոնտաժել տվյալ տարածքի նստարանները, տեղափոխել իր մոտ և ավարտից հետո նորից տեղադրել նույն տեղում: Տեղադրումն իրականացնել վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման որևէ աշխատակցի ներկայությամբ, տեղադրումն իրականացնելուց հետո պատվիրատուին ներկայացնել տեղադրված գույքի լուսանկարը` թղթային կամ էլեկտրոնային տարբերակով (պայմանագիրը կնքելուց հետո էլեկտրոնային հասցեն կտրամադրվի վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանմանը և մատակարարին): Նստարանի որևէ անտեսանելի մասում պետք է լինի դաճված «Կենտրոն 2023» բառերը: «ԵՐԵՎԱՆ» ՁՈՒԼՎԱԾՔՈՎ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՍՑԵՆԵՐ /յուրաքանչյուր հասցեում տեղադրվող քանակը ճշտել պատվիրատուի հետ Մաշտոցի պողոտա Սայաթ Նովայի պողոտա Աբովյան փողոց Թումանյան փողոց Մոսկովյան փողոց Տերյան փողոց Նալբանդյան փողոց Բաղրամյան պողոտա Հանրապետության Հրապարակ Միսակ Մանուշյանի անվան պուրակ :

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«ԳԱՅԱՆԵ ԲԱԲԼՈՅԱՆ ԱՐՇԱՎԻՐԻ Ա/Ձ» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԵԱՃԱՊՁԲ-23/154 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	